ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/218

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Էջմիածնի շուկա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլ գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14069-2021 գրությամբ «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 26.08.2021թ. թիվ 02/16.4/7733-2021 գրության հիման վրա, 01.09.2021թ.-ին «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 01.09.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

08.09.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/218 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

17.09.2021թ.-ին և 24.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2021թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 26.08.2021թ.-ի թիվ 02/16.4/7733-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԷՋՄԻԱԾՆԻ ՇՈՒԿԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2021 թվականի ապրիլի 28-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 790-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 95 080 308 (իննսունհինգ միլիոն ութսուն հազար երեք հարյուր ութ) ՀՀ դրամ գումար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների՝ 2021 թվականի հուլիսի 19-ին սահմանված կարգով ծանուցվել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին:

Ընկերության կողմից համաձայնագիրը կնքելու համար պահանջվող փաստաթղթերը մինչ օրս չեն ներկայացվել:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանիորեն լուծել է և նույն օրն էլ դրա մասին ծանուցումը տեղադրվել է www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.09.2021թ.-ի գրությամբ դիմել է «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14069-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2021/218 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի միջև 28.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ շինարարության կազմակերպման նախագծով նախատեսված մոդուլային տիպի դպրոցի կառուցման աշխատանքների ամբողջ ծավալի կատարման ժամկետը կազմում է 450 օրացուցային օր:

iii. Պատվիրատուն 19.07.2021թ.-ին «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի ejmiatsin.shuka@bk.ru էլ. փոստին է ուղարկել թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

iv. Միաժամանակ Պատվիրատուն Մասնակցին հայտնել է, որ ծանուցումը և համաձայնագրի նախագիծը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեին պետք է ներկայացնել «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի կողմից կնքված համաձայնագրի 2 օրինակը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

v. Պատվիրատուն 11.08.2021թ.-ին թիվ 02/16.4/7313-2021 գրությամբ Մասնակցին հայտնել է, որ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Զիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման նպատակով 2021 թվականի ապրիլի 28-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» գնման պայմանագրի Մասնակցի 2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 5-11172-2021 գրությամբ ներկայացրած համաձայնագիրը պատվիրատուի ղեկավարի կողմից կարող է հաստատվել միայն պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքների առկայության դեպքում:

vi. Մասնակիցը Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» ՍՊ ընկերության միջև 28.04.2021թ.-ին կնքված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» պայմանագրի համար անհրաժեշտ բանկային երաշխիքները բանկի կողմից հաստատվել են և ընկերության կողմից կներկայացվեն քաղաքաշինության կոմիտե առաջիկա շաբաթվա ընթացքում:

vii. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

viii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 24.08.2021թ.-ին հրապարակված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 02/16.4/7588-2021 ծանուցման համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի ապրիլի 28-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» գնման պայմանագիրը 710 000 000 (յոթ հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամի չափով: ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 790-Ն որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 95 080 308 (իննսունհինգ միլիոն ութսուն հազար երեք հարյուր ութ) ՀՀ դրամ գումար: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8,13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2021 թվականի հուլիսի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին: Ընկերության խնդրանքով 2021 թվականի հուլիսի 19-ից ուղարկված ծանուցումը (տեխնիկական խնդիրներով պայմանավորված չստանալու հիմնավորմամբ) 2021 թվականի հուլիսի 29-ին կրկին անգամ ուղարկվել է Ընկերությանը և նշվել, որ համաձայնագրի և ապահովումների ներկայացման ժամկետները մնում են անփոփոխ, այն է՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ: 2021 թվականի օգոստոսի 9-ին Ընկերությունը հավաստել է, որ համաձայնագիր կնքելու և ապահովումներ ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստացել է 2021 թվականի հուլիսի 29-ին և խնդրել դրանց ներկայացման ժամկետի հաշվարկն իրականացնել այդ օրվանից: Մինչև 2021 թվականի օգոստոսի 19-ը ներառյալ (2021 թվականի հուլիսի 29-ից հաշված 15 աշխատանքային օր) Ընկերության կողմից համաձայնագիր կնքելու համար պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումների բանկային երաշխիքները չեն ներկայացվել: Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանիորեն լուծում է: Համաձայն

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը 2021 թվականի օգոստոսի 24-ին կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14069-2021 գրությամբ «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից,

պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ»*

ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե

պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 450 օրացուցային օրը:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ հաջորդող տարիների աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը (Մասնակիցը) համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի միջև 28.04.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրերով պետական գնման Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ շինարարության կազմակերպման նախագծով նախատեսված մոդուլային տիպի դպրոցի կառուցման աշխատանքների ամբողջ ծավալի կատարման ժամկետը կազմում է 450 օրացուցային օր:

Պատվիրատուն 19.07.2021թ.-ին «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի ejmiatsin.shuka@bk.ru էլ. փոստին է ուղարկել թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

Միաժամանակ Պատվիրատուն Մասնակցին հայտնել է, որ ծանուցումը և համաձայնագրի նախագիծը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեին պետք է ներկայացնել «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի կողմից կնքված համաձայնագրի 2 օրինակը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Պատվիրատուն 11.08.2021թ.-ին թիվ 02/16.4/7313-2021 գրությամբ Մասնակցին հայտնել է, որ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Զիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման նպատակով 2021 թվականի ապրիլի 28-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» գնման պայմանագրի Մասնակցի 2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 5-11172-2021 գրությամբ ներկայացրած համաձայնագիրը պատվիրատուի ղեկավարի կողմից կարող է հաստատվել միայն պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքների առկայության դեպքում:

Մասնակիցը Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» ՍՊ ընկերության միջև 28.04.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» պայմանագրի համար անհրաժեշտ բանկային երաշխիքները բանկի կողմից հաստատվել են և ընկերության կողմից կներկայացվեն քաղաքաշինության կոմիտե առաջիկա շաբաթվա ընթացքում:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 24.08.2021թ.-ին հրապարակված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 02/16.4/7588-2021 ծանուցման համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էջմիածնի շուկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի ապրիլի 28-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» գնման պայմանագիրը 710 000 000 (յոթ հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամի չափով: ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 790-Ն որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 95 080 308 (իննսունհինգ միլիոն ութսուն հազար երեք հարյուր ութ) ՀՀ դրամ գումար: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2021 թվականի հուլիսի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հուսստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին: Ընկերության խնդրանքով 2021 թվականի հուլիսի 19-ից ուղարկված ծանուցումը (տեխնիկական խնդիրներով պայմանավորված չստանալու հիմնավորմամբ) 2021 թվականի հուլիսի 29-ին կրկին անգամ ուղարկվել է Ընկերությանը և նշվել, որ համաձայնագրի և ապահովումների ներկայացման ժամկետները մնում են անփոփոխ, այն է՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ: 2021 թվականի օգոստոսի 9-ին Ընկերությունը հավաստել է, որ համաձայնագիր կնքելու և ապահովումներ ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստացել է 2021 թվականի հուլիսի 29-ին և խնդրել դրանց ներկայացման ժամկետի հաշվարկն իրականացնել այդ օրվանից: Մինչև 2021 թվականի օգոստոսի 19-ը ներառյալ (2021 թվականի հուլիսի 29-ից հաշված 15 աշխատանքային օր)

Ընկերության կողմից համաձայնագիր կնքելու համար պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումների բանկային երաշխիքները չեն ներկայացվել: Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանիորեն լուծում է: Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը 2021 թվականի օգոստոսի 24-ին կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Վերոգրյալ իրավանորմերի՝ գործով հաստատված փաստերի հետ միասին գնահատման և համալիր վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում, «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության՝ թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք Համաձայնագրի կնքման և ներկայացման հետ միաժամանակ որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները չներկայացնելու արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 24.08.2021թ.-ին միակողմանի լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14069-2021 գրությամբ «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/218 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էջմիածնի շուկա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**